



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L 4 n
1434 - 1441

150

1999

ԿՐԹԱՐԱՆ
ԺԵՏՏԵՄԵԿԵՆ ԲԵԼՔ

ՊԱՍ Ը.

ՀԵՐՄԱՆ ԵՒ ՈՆԵՍԻՄ

Ի

Մ. ՎԱՐԴԱՊԵՏԵԿ ՄՈԽՐԱՏԵԱՆՑ
ՅԱԽԱԳԵԼԱԿԱՆ ՈՒԽՏԵԿ Ս. ՅԱԿՈՎՅԵԱՆՑ

ՀՐԱՄԱՆԱԿ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՄՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎՅԵԱՆՑ

1876

Կ Բ Թ Ա Բ Ա Ն
ԵՒԵՏԵՐԵՆԵԿԱՆ ԲԵՄՑ

Դ Ա Ս Ը.

Հ Ե Ղ Մ Ա Ս Ե Խ Ա Ն Ե Ս Ի Մ

Տրամախոսութիւնն ՚ի Ղոկասու .

Թ . 43 - 56 :

Հերմաս (կարտալը) . — Խոաւ որ
շատ սաստիկ է :

Ոնեսիմ (կրգեր , բայց կ'ընդհապե՞ւ
կ'ասէ) . — Ի՞նչէ , որ շատ սաստիկ է :

Հերմաս . — Այս մարդոց անմը-
տութիւնն է :

Ոնեսիմ . — Ի՞նչ մարդոց վերայ կը
խօսիք :

Հերմաս . — Կը ցաւիմ ասել՝ Ա-
ռաքելոց վերայ :

Ոնեսիմ . — Առաքելոց վերայ . բայց
կը յուսամ՝ թէ ոչ յետ Պենտեկոստէին
կամ Հոդեղալստեան :

41441. 60

28. 1444

Հերմաս . — Ո՛չ, բայց դիցուք թէ
Պենտեկոստէն առաջ է, մի թէ օրի-
նաւո՞ր է :

Ոնեսիմ . — Եթէ Պենտէկոստէն
առաջ է, այսինքն քանի որ Ապառա-
ծային Հոգւոյ շնորհաց ձառագայթն
ցոլացած չէ խաւարի մէջ—հոգւոյ մը-
թութեան մէջ—ես չեմ դաստապար-
տեր նոցա անմտութիւնն , միշելով
Ս . Պօղոսի խօսքն , “Մինչ տղայն էի
իբրեւ զտղայ խօսէի , իբրեւ զտղայ
խորհէի , իբրեւ զտղայ համարէի ” .
Ա . Կորն . ԺԳ . 11 :

Հերմաս . — Բայց խօսքն տղայու-
թեան վերայ չէ , այլ անմտութեան :
Ամենէն հասարակ մարդն , նոյն խել
անհաւատն անդամ այնպէս չը խօսիր
ու դատեր , ինչպէս Առաքեալք կը խօ-
սին և կը դատեն : Լաւ միտ դիր , ահան
կը կարդամ Դուկասու թ . 43—56
համարներն :

Ոնեսիմ . — Կարդամ , որ կարողա-
նանք պարունակութեան խորն թառ
փանցել և այնպէս խօսիլ :

Հերմաս . — Լսէ՞ , լաւ լսէ՞ . “Եւ
զարմանային ամենեքեան ՚ի վերայ մե-
ծամեծացն Աստուծոյ . և ՚ի զարմանալն
ամենեցուն ՚ի վերայ ամենայնի՝ զոր
առնէր , ասէ ցաշակերտան իւր . Դիք
դուք ՚ի լսելիս ձեր վրանս զայսոսիկ .
զի Որդի մարդոյ մատնելոց է ՚ի ձեռոս
մարդկան : Եւ նոքա ոչ գիտէին վրանն,
և էր ծածկեալ ՚ի նոցանէ , զի մի գի-
տասցեն , և երկնչեն հարցանել ցնա
վան բանին այնորիկ :

“Եմուտտ խորհուրդ ՚ի նոսա՝ թէ ո՞
արդեօք մեծ իցէ ՚ի նոցանէ : Յիսուս
իբրեւ ծանեաւ վլորհուրդս սրտից
նոցա , առ մանուկ մի՛ կացոյց ՚ի մէջ
նոցա առ իւր , Եւ ասէ ցնոսա . Որ ոք
ընկացի զմանուկս զայս յանուն իմ՝
վիս ընդունի , եւ որ զիս ընդունիցի
ընդունի զառաքիշն իմ . զի որ փոք-
րիկն է յամեննեսին ՚ի ձեղ՝ նա եղիցի
մեծ :

“Պատասխանի ետ Յովհաննէս՝ և
ասէ . Վարդապետ , տեսաք զոմն՝ որ
յանուն քո դեւս հանէր՝ և արդելոք

զնա, զի ոչ շրջի ընդ մեղ։ Ասէ յնոսա
Յիսուս։ Մի արգելուք, զի որ ոչ է
ձեր թշնամի՝ ի ձեր կողմն է։

“Եւ եղեւ ՚ի կատարել աւուրց
վերանալց նորա՛ և ինքն զերեսս հաս-
տատեաց երթալ յԵրուսաղէմ։ Եւ ա-
ռաքեաց հրեշտակս առաջի երեսաց
իւրոց՝ և իբրեւ չոքան՝ մաին ՚ի գիւղ-
մի Սամարացւոց՝ պատրաստել ինչ նը-
մա։ Եւ ոչ ընկալան զնա (Սամարացիք),
զի գէմ եղեալ էր նորա երթալ յԵ-
րուսաղէմ։ Իբրեւ տեսին աշակերտքն
Յակովոս և Յովհաննէս, ասեն. Տէր,
կամիս, զի ասացուք, եւ իջցէ հուր
յերկնից՝ և ստուկեսցէ զնոսա, (որ
պէս արար Եզիա)։ Դարձաւ սաստեաց
՚ի նոսա և ասէ. Ո՛չ գիտէք՝ որոյ հո-
գւոց էք գուք։ Զի Որդի մարգոց ոչ
եկն զոգիս մարդկան կորուսանել՝ այլ
կեցուցանել, և գնացին յայլ գիւղո։

Չես զարմանար, չես շփոթիր այն
անմոռութեան վերայ։ ի՞նչ ամօթ։

Ոնեսիմ։ ։ Ո՛չ կը զարմանամ և ոչ
կը շփոթիմ։ այլ միայն կը տեսնեմ որ

մութ կը թուի ձեղ, ինչ որ պարզէ...
Եւ ըստ իս :

Հերման։ ։ Ի՞նչ, միթէ կարող ես
դու ՚ի գերեւ հանել սոյն ծանր իրու-
զութիւնն և արդարացնել Առաքեալ-
ներն։ Հաւատա՛, որ գժուարին խըն-
դիր է այս։

Ոնեսիմ։ ։ Դժուարին չե ամենեւ-
ւին, պէտք է միայն լաւ խորհիլ եւ
հաւատալ։ Ես քաջ գիտեմ, սիրելի
բարեկամ, որ գուք եւս կը սկսիք այ-
նուհետեւ ինձ պէս խօսիլ։ Այժմ
գուք շփոթուած եւ տարակաւսած
կ'երեւէք, ոչ միայն մի, այլ երկու կէ-
տերու վերայ։

Հերման։ ։ Նատ լաւ, վարատէ
տարակուսանքս, իմ ուղածս իսկ այդ
է։

Ոնեսիմ։ ։ Ես գիտեմ, շատ լաւ
գիտեմ, և պատրաստ եմ ձեր տարա-
կուսանքն վարատել, այնպէս որ գուք
եւս գոհ լինիք։ Խնչպէս կ'երեւէք, գուք
տակաւին չը գիտէք թէ մինչեւ ուր
կարող է հասնիլ բնական մարդոց եւ

նցյն իսկ մի պարզ քրիստոնէի կուրութիւնն : Դուք ըսկ բնական մարդոց սխալմունքն կամ մոլորութիւնն հնարաւոր կը համարէք, եւ այնպէս լը կարծէք՝ թէ քրիստոնէի իմաստութիւնն կամ հոգեւոր կարողութիւնն անսահման է : Իսկ ես կ'ասեմ ձեզ, որ առաջինն աւելի անմիտ է, և երկրորդն ձեր կ'արծածէն աւելի սխալական :

Հերմաս . — Առաջնոյն վերայ վիճել հարկ չ'է, համամիտ եմ ձեզ : Աստուած հոգիներու եւ մոլորու լցոն է . ոլ որ Աստուծոյ հետ ըս քայլեր, խաւարի մեջ կը քայլէ . ամեն անկում կը պատահի այն ճանապարհին վերայ, ուր ոչ մի լրսոյ նշոյլ ըս ճառագայթեր : Եւ այս Աստուծոյ յատուկ ըս նորհքն է, որ ամենեքեան չ'են անկանիր ՚ի խորիսորատ : Երկար ժամանակէ, որ այս տեսակ բաներու վերայ ես ամենեւին չ'եմ զարմանար : Ձեմ զարմանար մանաւանդ մեր Տիրոջ ժամանակակից մի Նրէի բարոյական շարու-

թեան եւ անմտութեան վերայ : Փարիսեցիք եւ Սադուկեցիք, Դպիլք եւ Վարդապետք օրինաց, կարծես իմէ ամեն ձիգն կը թափեն, ամեն խելք ու միտք գործ կը գնեն, որ աւելի ցցց տան իրենց յիմարութիւնն : Բայց մը տածեցէք, որ այս տեղ ինողին Առաքելոց վերայ է, որոնք Յիսուսի Քրիստոսի իմաստութեանն վկայ էին, նորավարդապետութեանց շարունակ ունելունդիր էին եւ որոց ինքն ասած էր . « Ձեզ տուեալ է գիտել զմորհուրդոս արքայութեան երկնից և նոյս չէ արւեալ » . Մատ . ԺԳ . 11 : Այս փառաւոր ընտրութեան եւ նշանաւոր արտօնութեան հետ ինչպէս կը համաձայնեցնէք այն ցած մոտածմունքներն , այն կոսիտ զգացմունքներն , զորս կ'արտայայտեն նոքա այնպիսի մի փափուկ վայրկենի մէջ, այնպիսի մի խորհրդաւոր խօսակցութեան մէջ, որ մարդոց զայրոցթին կը շարժի երբ կը կարդայ : Միթէ առաւելքան զայս մոլար անմտութիւն կը լինի, միթէ առաւել-

քան զայս ծանր սխալմունք կը լինի :
Կարճ խօսքեր են , բայց գիտէք թէ
որչափ կը հակառակին Աւետարանի
ոգւոյն . որչափ վեր ՚ի վայր կը ցնցեն
Աւետարանի վարդապետութիւնն : Կը
տեսնէք թէ ի՞նչպէս անհսդ են իրենց
Վարդապետին համար . ի՞նչպէս ան-
տարբեր են ճշմարտութեան համար .
ի՞նչքան կը մտածեն և կը հոգան ի-
րենց համար . ի՞նչքան աններողամիտ
են այլոց համար . կարճ ասենք , կը
տեսնէք , թէ ի՞նչքան մոլեռանդ են և
միանգամյն անտարբեր : Միթէ այս
ամենն տեսնալի չը զարմանար , չը ցա-
ւիր , չը գայթակղիր : Ի՞նչ ուսած են
ուրեմն աշակերտներն իրենց Վարդա-
պետի գլորոցին մէջ : Ի՞նչ օգուտ քա-
ղած են իրենց շնորհուած անհամե-
մատ արտօնութիւննեն , որուն ամեն ոք
կը փափաքի անձկանօք . ի՞նչ շահ ե-
ղաւ նոցա Յիսուսի մարդասիրութիւ-
նին , որ կամեցաւ միշտ իւր հետ ու-
նենալ թէ ծովու և թէ ցամսքի վե-
րայ . նոցա առջեւ բժշկեց , նոցա առ-

ցեւ աղօթեց և սիրեց : Ի՞նչ շահեցան ,
քանի որ կը տեսնսուի , որ աչք ունեցած
են եւ տեսած չեն , ականջ ունեցած
են և լսած չեն , և բերան ունեցած են
միմիսյն անիմաստ խօսքերով իրենց
Վարդապետն վշտացնելու համար . ես
չ'եմ զարմանար , որ Յիսուս աղաղա-
կեց մի անգամ . “ Մինչեւ յերբ եղեց
ընդ ձեզ եւ անսայցեմ ձեզ ” . այլ կը
զարմանամ ” թէ ի՞նչպէս այնքան ժա-
մանակ համբերեց նոցա խօսածներուն
և արածներուն :

Ոնեսլու . — Սիրելի բարեկամ , գուք
շատ խատապահանջ էք և խատասիրու :
Սակայն այնպէս պիտի անեմ , որ գուք
ինքնին ձեր առարկութեանցն պատաս-
խանէք : Եթէ մոտածէք , իսկայն պիտի
ասէք , որ Յիսուս արդարեւ իրաւունք
ունէր իւր աշակերտներուն անսալ ,
ներել և իւր մօտ պահել և այնպիսի
իրաւունք , զօր գուք կարսղ չէք ճա-
նաչել : Պիտի ասէք , որ աշակերտաց
համար , (որոնք որոշուած էին իրենց
Վարդապետի ուսումն երկրիս վերայ)

շարունակելու) փոքր բան չ'էր նոյն ուսմանց և վարդապետութեանց ինքնին ունինդիր լինիլ։ Պիտի ասէք, որ այն ուսմունքներն մի անդամ նոյա յիշողութեան մէջ թաղուելով և ըստ երեւութիւն մեռնելով, ինչպէս հատն ցորենց կը մեռնի հողի մէջ ձմերուան ամիսներուն մէջ, պէտք է անշուշտ գարնանային արեգակով (աստուածաւ յին շնորհաց արեգակով) հողէն ենէնին և իրենց երկար ժամանակ ծածկը լած կեանքն յայտնէին աշխարհի։ Պիտի ասէք, որ Յիսուսի հետ կենակցելու և նորա խօսքերն լսելու յիշատակն կենդանանալով և սրբագործուելով ՚ի ձեռն Հոգեւոյն Սրբոյ պէտք է նոյա սիրտն լցնէր մի քաղցր և կենդանարար ջերմութեամբ և պէտք է ամենուն համար լինէր մի անդին ժառանդութիւն։ Պիտի ասէք, որ Յիսուսի Քրիստոսի կեանքըն, ինչպէս և նորա յարտութիւնն, կը պահանջէր վկաներ, նորա խօսքն կը պահանջէր արձադանք, նորա ընաւուրութիւնն՝ մի ճիշդ և կենդանի նմա-

նութիւնն, եւ այս նկատմամբ մարդոց Որդւոյ ընկերակցաց յիշատակն մի կատարեալ Ճոխութիւնն է Եկեղեցւոյ։ Վերջապէս պիտի ասէք, որ նոքա անուս մմացած չեն, այլ անտարակցոյն բան մի ուսած են։ Պիտի ասէք, որ շատ անդամ սրտութիւնն կը խառնուի Ճշմարտութեան հետո։ Պիտի ասէք, որ արեգակն աստիճան առ աստիճան կը քարձրանայ հոգեւոյ հորիզոնին վերայ, ինչպէս և երկրիս հորիզոնին վերայ։ Պիտի ասէք, որ Առաքեալք ուսած էին վստահիլ իրենց Վարդապետին։ կը սիրէին իրենց վարդապետն, եթէ ոչ հոգեւոր սիրով, որ բոլանդակ սիրան կը վերանորոգէ, գէթ մուերմական և անկեղծ սիրով։ Պիտի ասէք, որ արդարեւ եթէ մի և նոյն Առաքեալներն երկու տարբեր ժամանակի մէջ նկատենք եւ համեմատենք, կ'ապշինք իրենց տղիւտութեան և խստասրտութեան վերայ յառաջքան իրենց Վարդապետի յարութիւնն և յառաջքան Հոգւոյն Սրբ-

բայց գտլուստն. բայց եթէ իրենց հայրենակցաց հետ համեմատենք աւելի կըզգանք իրենց արժանաւութիւնն. վասն զի իրենք կ'ընդունին, բայց իրենց հայրենակցըն կը մերժեն և չեն ձանաչեր զՑիսուս Քրիստոս: Այս համեմատութիւնն աւելի կը պարզէ խնդիրն, և դուք սիրելի Հերմաս, այն ժամանակ Առաքեալներն պայծառ կողմէն կը տեսնէք, մինչդեռ խաւար կողմէն միայն կը տեսնէիք: Տարակցս չունիմ, որ այս ամենն դուք պիտի ասէք ինքնին. բայց կը թողում այս, կը թողում առ այժմ ձեր խիստ դատաստանին, և կը հրաժարիմ ներելէ կամ արդարացնելէ: Ես եւս կամիմ այն աչքով տեսնել, որով դուք կը տեսնէք այժմ: Եւ ոչ միայն այսքան, այլ նաև ուրախ եմ, որ նոքա ինքնին կը մատնուին. ինքնին կը յայտնութիւնոցա խղճութիւնն իրենց աւանդած պատմութեան մէջ. Վերջապէս ուրախ եմ, որ բնական մարդն կ'երեւի իւր բոլոր մերկութեամբ և տհասութեամբ:

Հերմաս. — Լաւ բացատրէ միտքդ Ռնեախ. — Կը բացատրեմ: Առաքելոց օրինակն մեղկ'ուսուցանէ թէ որշափ հեռի էին մարդիկ ուզիզ մտածութեան եղանակէն. որշափ անծանօթ էին երկնային Վարդապետի ոգւցն և մտածութեան և թէ ինչ մեծ զօրութիւն գործ դրաւ Յիսուսիւր աշակերտաց տաց սիրան կրթելու համար. վասն զի նախ Յիսուսն և ապա իւր աշակերտներն աւանդեցին մեղ ամեն տեղեկութիւններ և կենդանի օրինակներ, որով կը դատեմք այժմ ամենայն խստութեամբ նոցա վարքն ու խօսակցութիւնքն՝ յառաջքան նոցա մտաց վերանորոգումն Հոգւցն Արքոց Գալութեան զօրութեամբ: Մինչեւ Հոգւցն Արքոց Գալուստն, թողներուի մեղ ասել, նոքա կը պատկանէին տակաւին անհաւատ և իւր աղջին. Ղուկ. թ. 41: Նոքա կը պահպանէին տակաւին նոյն աղջի վարքն ու բարքն եւ կը խօսէին նորա լեզուն: Յիսուս Քրիստոս պէտք է առ ինքն յիշեր իւր աշակերտներն և ժողովէր իւր Եկեղե-

ցին, իւր բայց բանալէն զինի, Յուշ. ԺԲ. 32.
այսինքն անիծեալ փայտի վերայ խա-
չուելէն զինի : Յիտուսի հոգեւոր զօ-
քութեան և կարողութեան առատու-
թիւնն խաջուելէն զինի պիտի սփրու-
ռեր ինչպէս Առաքելոց, նոյնպէս եւ
բոլոր աշխարհի վերայ : Վասն զի ինչ-
պէս Վարդապետն, նոյնպէս եւ իւր
Աշակերտներն տկարանալով պիտի զօ-
քանային . “Յորժամ տկարանամ, յայն-
ժամ զօրանամ” . Բ. Կողն. ԺԲ. 10,

Աշակերտաց լեզուն եւ զգացմունքն
պէտք չէ որ զարմանալի թուին ձեզ :
Աւելի ուրախ պիտի լինիք, որ Աշա-
կերտաց, յառաջքան Պէնտեկոստէն,
ունեցած տիպն ու տիպարն, խորհուր-
դըն ու դատողութիւնն Շշդութեամբ
և հաւատարմութեամբ պահպանուած
է : Փոխանակ գայթակղելու՝ օգուտ
քաղեցէք Աշակերտաց օրինակէն և այն
պատմութիւնն, զոր այժմ կարդացիք,
համարեցէք իրեւ մի հայելի և ամեն
ժամանակ մէջը նայեցէք :

Հերմաս . — Կը խոստովանիմ, որ

չեմ հասկնար ձեր միտքն : Ինչ որ լի-
նիմ ես, կարող չեմ իմ գէմքս տեսնել
գոյն հայելոյն մէջ և ոչ մի քրիստո-
նեայ կարողէ տեսնել : Այն սկզբունքն,
որով մէք կը դատապարտեմք Յիտուսի
Քրիստոսի աշակերտներն, սկզբնական
տարերը են, Քրիստոնէութեան Ա. և Բ
են եւ յետին աստիճանի քրիստոնեայ
անդամ չէ, ով որ կը մոտածէ և կըզգայ,
ինչպէս կը տեսնենք որ կը մոտածեն և
կըզգան աշակերտներն :

Ոնեալ . — Բարեկամ, դուք շտու կը
պաշարիք ձեւերով և ժամանակի տար-
բերութիւնն ամենեւին ՚ի հաշիւ չէք
առնուր : Աշակերտներն թէ կարծը են
և թէ փափուկ, թէ խիստ են և թէ
մեղմ, ոչ կը կեղծեն և ոչ կը ժումկա-
լին . չը գիտեն ինչ որ մենք գիտենք և
չեն զգուշանար իրենց անձին : Մենք
կըզգուշանանք, մենք շատ լաւ գիտենք
թէ ուր և ինչ պէտք է խօսիլ և ուր
տէտք է լրել : Այսօրուան օրս բնա-
կան մարդն կը կեղծաւորի, կը գիմա-
կաւորի և ոչ միայն ուրիներն կը պատ-

ըէ , այլ նախ և առաջ զինքն կը խար-
բէ . պէտք է ձեւի մէջն հիմունքն
տեսնել , խոր թափանցել և իրն այն
պէս նկատել : Աւետարանն իսկ կ'օգնէ
մեղ ճանաչել հին մարդն նոր մարդոյ
հանդերձից և կերպարանաց ներքեւ ,
և այն ժամանակ աշակերտաց մէջ ակա-
ներեւ տեսնուած բնութեան ապա-
կանութիւնն՝ նշմարել կը տայ մեղ մեր
սեփական վիճակն :

Սոյն վայրկենէն իսկ կարող ենք փոր-
ձել այս բանն : Նկարագրեցէք դուք
աշակերտներն այն տողերուն համե-
մատ , որոնք ձեր սիրոն պղտորած և
միտքն միժացուցած են և թողէք ինձ
որոնել նոյնանման օրինակներ :

Ներմաս . — Ո՞ւր կարող էք որոնել :

Ոնեսիր . — Եթէ լսէք ինձ , ինքնին
կարող էք ասել :

Ներմաս . — Ձեր առաջարկած պայ-
մանն գիւրին է . բայց շատ ախորմելի չէ :

Ոնեսիր . — Այն պայմանն որ ինձ
կը վերապահեմ եւս առաւել անա-
խորմ է . դուք կարող էք վերջն ինքնին

դատել : Ակսեցէք ձեր պարտքն կատա-
րել . դուք դատապարտեցիք . կը մնայ
ձեզ հաւանեցնել :

Ներմաս . — Ես կը կատարեմ պարտք
և ը հաւանեցնեմ , բայց ցաւօք սրտին
Ես չեմ սիրեր ամեննեւին սխալման մէջ
գտնել այս մեծ մարդիկն որոնք
մեծ են իրենց կատարած պաշտօնով
եւ աւելի մեծ իրենց սրբութեամբ :
Բայց սյն վայրկենին մէջ ոչ մեծ են
նոքա և ոչ սուրբ , պէտք է որ ուղիղ
խօսիմ : Նոքա նոյն իսկ չափազանց դը-
ռեհիկ են : Ուստի՞ կը գան : — Թափօր
լեռնէն , ուր վիայ եղան նոքա իրենց
Վարդապետի փառացն : Երկնից գու-
ռն , այսպէս ասենք , բացուեցաւ նոցա-
Անցեալ , ներկայ և ապառնի միացան
նոցա աշաց առջեւ սուրբ լերան վե-
րայ : Ամեն ժամանակներ միացան ՚ի
մի և լուսոյ մէջն որոտացող Աստուծոյ
ձայնն առաջուց մի ճաշակ տուաւ նո-
ցա յաւիտենականութեան : Լեռնէն
ցած , յանձն մի անբաղդ և միամօր
մանկան , երեւեցաւ նոցա սեպհական

բնութեան թշուառութիւնն , որպէս
զի փայլի մարդոց Որդւոյ զօրութիւնն
ու բարութիւնն , Բաղմութիւնն , իւր
աղաղակներով , օրինակ կը տոյ նոցա
հաւատոյ և նշան երկրպագութեան :
Տես , թէ կը հետեւին նոքա այս օրին
նակին . տես թէ կը հասկնամն նոքա
այս նշանն :

Յիսուս Քրիստոս , որ չը կամիր , որ
Առաքեալներն այլ ընդ այլց իմանան
կամ պատրին նոյն պահուն կատարուած
յաղթանակէն , կ'ասէ . « Կը լսէք սոյն
աղաղակներն » : Այս աղաղակներն ,
այս բարբառներն լի են զարմացմամբ
և յարգանօք առ իս , և նոքա , որք կ'ար-
տասանեն , թուի թէ յաւիտեան իմ
կողմն անցած են : Այս չ'արգելուր ,
որ « Մարդոց Որդին չը մատնուի ՚ի ձե-
ռըս մարդկան » : Ի՞նչ մարդկան : —
Թէրեւս նոյն իսկ այս աղաղակող մարդ-
կան : Այսքան ահա անհաստատ կը
կարծեմ ես միամօր մանկան բժշկու-
թեան հրաշխ տոպաւորութիւնն նոցա
վերայ : Եւ գիտէք , թէ ի՞նչ կը նշա-

նակէ անկանիլ ՚ի ձեռս մարդկան :
Դաւիթ ամեն պատուհաս յանձն կ'առ-
նուր , որ ուղղակի Աստուծմէ կը գար ,
բայց կը սոսկար անկանիլ ՚ի յեռու մարդկան .
Սաղ . կԴ . 14 : Եթէ ասուած է թէ՝
« Ա , մէծ է անկանիլ ՚ի ձեռս Աստու-
ծոյ կենդանուոյ » , Եֆր . Փ . 31 . այս
վերջին աւուր և վերջին հատուցման
համար ասուած է . այս կենաց մէջ
Աստուծոյ տուած պարզ պատիմներն
միւս կենաց մեծ պատուհաններու տեղ
կը բռնեն . վասն զի Աստուած յայսկցոյ
գերեզմանին կը պատժէ , բայց յանկցոյ
գերեզմանին կը պատուհանէ : Բայց աշ-
խարհիս վերայ ամենէն սոսկալին մարդ-
կանց ձեռքն անկանիլ է : Արդ՝ այս է ,
որ պահուած է մարդոց Որդւոյն : Ան-
պատճառ նա պէտք է մասնուի ՚ի ձե-
ռըս մարդկան . պէտք է որ այսպէս լինի ,
և ինչպէս որ , ոչ ոք կարող չէ յափշտա-
կել նորա ձեռքէն , զարս կը սիրէ նա ,
Յուլ . Փ . 23 . նոյնպէս ոչ ոք կարող չէ
(քանզի Աստուած թողած է) մարդոց
Որդին յափշտակել այն մարդկանց

ձեռքէն, որը զինքն կատեն :

Աշակերտներն ամենեւին չեն հասկրար այս բաներն և ես չեմ կամիր, որ հասկնան, բայց :

Ոնեսիմ . . Ներեցէք ինձ ընդհատել ձեր խօսքն և ասել ձեզ՝ թէ իրաւունքը ունիք, որ չէք կամիր, որ աշակերտներն հասկնան : Բայց երբ այս բանս կը ներուի նոցա, պէտք է որ ներուի ամեն բան : Վասն զի ամեն բան այս կետէն կը ծագի և կամ այս կէտով կը բացատրուի :

Եթէ այս սիսալմունքն ներուի, միւսն ներն ինքնին կը ներուին : Եթէ այս ճրշմարտութիւնն ըմբռնած և հասկցած լինէին աշակերտներն, մնացեալներն դիւրաւ կը հասկնային : Ով որ Յիսուսին կը հաւատայ միայն փառաւորուած ժամանակ՝ նա բան չը գիտէ . ով որ Յիսուսին կը հաւատայ խոնարհած, նախատուած և անարդուած ժամանակ՝ նա ամեն բան գիտէ : Համաձայնեցէք ինձ, որ այս այսպէս է այսօր, բայց առաջ եւս այլապէս չ'էք : Այս

քան առ այս բաւական կը համարիմ: Ներեցէք, որ ընդհատեցի ձեր խօսքն, հաձեցէք ուրեմն շարունակել :

Հերմաս . . Պիտի շարունակեմ. բայց խմացէք, որ շատ յօժարութեամբ կը նդունիմ նաեւ ձեր գիտողութիւնն : Լաւ դիտեցէք, կը խնդրեմ, թէ արդեօք աշակերտներն կարօտութիւնն ունին խաչի խորհուրդն հասկնալու, որ այն ցաւալի խորհորդատին մէջ չ'անկանէին, ուր այժմ կը տեսնեմք ընկած :

Ես կ'ասեմ ուրեմն, որ աշակերտներն ինքնին հետախուզելով կարող չեմն Յիսուսի Փրիստոսի առաջին խօսքն հասկնալ, որ խաչի խորհուրդն կը պարտունակէր : Նորա եթէ ինքնին հետազոտէին, ունայն պիտի լինէր իրենց ջանքն, բայց կարող էին իրենց Վարդապետէն հարցնել կը զգուշանան իրենց անձին, չ'են հարցնէր : Յիսուսի յանցաւոր գատուելու գաղափարն նոցա մոքէն ՚ի վեր է . նորա չեն կարող ըմբռնել և հասկնալ, նորա կը թերահաւատին, բայց մի բան կայ որ շատ

պարզ է նոյս համար Յիսուսի խօսքեարուն մէջ, այսինքն փոխանակ մի հզօք և փառաւառ Տէր և Վարդապետ ու նենալու, որուն կը յուսային իրենք ժողովրդի աղաղակիներուն եւ ցնծութիւններուն նայելով, պիտի զիջանին ունենալ մի հաղածեալ և անարգեալ Վարդապետ: Նոքա կ'ուղենին տարակուսիլ այս բանիս վերայ, Նոքա կ'երկնչին իրենց միտքն սցն գաղափարով զբաղեցնել, նոքա ներքնապէս կըզգուշանան թերեւս կարծել, որ լաւ հասկցած չ'են, և այս պատճառաւ է, որ չ'են ուզեր հարցնել իրենց Վարդապետէն:

Ոնեալին. — Շատ խիստ էր դուք: Մի այլ ոք, փոխանակ այդպէս դատելու, թերեւս պիտի ասէր՝ աշակերտաց սասափկ մէրն էր, որ իրենց բերանե կը փակեր ըստքրել խաչի խորհուրդն, ըստգել իրենց Վարդապետի սիրտն, և եթէ չ'են հարցներ, պատճառն այն էր, որ կը դողպային տեսնել դէմ յանդիման իրենց Վարդապետի չարչա-

բանքն ու մահն, զոր այնքան կը սիրէին:

Հերման. — Ո՞չ, աշակերտներն ու ըիշբանով զբաղած են: Նոքա սկսած են վիճել իրարու հետ: Եւ ի՞նչ բանի վերայ կարող են վիճել սցնապիսի մի փափուկ վայրկենի մէջ: Եթէ իրենք չ'իմացնէին մեղ (և հաւատացէք, որ ամենէն աւելի ես կը զարմանամ սոյն աղնիւ միամտութեան վերայ) ոչ ոք պիտի կարենար երեւակայիշ՝ ինչ բանի վերայ որ նաքա կը վիճէին: Խնդիր է իմանալ թէ իրենց մէջ ովէլ է ամենէն մեծն: Առքեզյարմար վայրկեան այսպիսի վիճաբանութեան: Ի՞նչ զարմանալի բան, սցն խնդիրն կը յուղուի այն Թափօր լերան ստորոտն, որ պահ մի առաջ կը փայլէր փառօք Յիսուսի Քրիստոսի: Այս առաջինն կը բացուի այն վայրկենին, յորում Յիսուս իւր չարչաբանաց խորհուրդն կը յայտնէ: Այս, ախ, այս փափուկ պահուն մէջ կը վիճեն թէ ովէլ պէտք է ամենէն մեծ լինի: Ինչո՞ւ չէք վիճեր, թէ ովէլ

պէտք է ամենէն փոքր լինի : Այս կը յարմարի ահա ձեզ, ով աշակերտներ : Այս կը պատշաճի ձեր խօսած ժամուն և վայրկենին : Ահա ձեզ պատեհ ժամանակ . ջանացէք ձեր ոնչութիւնն քննելու, որ չուտով պիտի չը կարենաք քննել և աւարտել :

Ո՞նեսիմ . — Իսկ մենք, սիրելի բարեկամ, աւելի լու կը լինի, քննենք, որքան կարող ենք, Վարդապետի իւմաստութիւնն քան թէ աշակերտաց փոքրութիւնն : Զը մոռանանք որ սոյն աւետարանական պատմութեան գրլիւաւորնապատակին է, աշակերտաց կուրութեան և խստարատութեան առթիւ, փայլեցնել Յիսուսի Քրիստոսի ուղղութիւնն, բարութիւնն, անաշառարդարութիւնն և աստուածային ըդգնութիւնն, միով բանիւ այն ամեն առարինութիւններն, որոնք մի մի կատարելութիւններ են : Ո՞չսակ քաղցր է, եթէ աշակերաք Յիսուսի Քրիստոսի տուած դասին ուշադիր գտնուին : Ո՞չսակ փափաքելի է, որ իրենց անձն

այն փոքրիկ մանկան տեղն դնեն, զոր Յիսուս կը ներկայացնէ իրենց իրեւու պատկեր և տիպար ճշմարիտ երկրպատուաց : Թո՞ղ գգուեն շտապաւ, գոնէ հոգւով, քանզի մարմին տկար է, Սար . իջ . 41) Գո՞րիկ տիտղոսն , որ մեծ արժանաւորութիւն ունի մեր հեղ Թագաւորին համար, ինչպէս որ ըստ դատողութեան մարդկան վերջին կարծուածն՝ առաջին տեղն ունի նորա սրբուին մէջ :

Հերման . — Այս մասին ես բոլորին համամիտ եմ ձեզ . կը խորհիմ և կըզգամ, ինչպէս դուք կը խորհիք և կըզգաք : Բայց մի մոռանաք՝ թէ ի՞նչ բանի վերայ է մեր բուն խնդիրն : Դուք առիթ տուիք, որ այս խնդիրն ես բացի : Թէպէտ խօսելիքներ շատ կան, բայց այլ ժամանակի թողունք զայն . ամեն բան իւր ժամանակն ունի : Իմ բուն առարկան աշակերտներն են . իմ դատա նոցա մասին է :

Ո՞նեսիմ . — Շատ լաւ, շարունակէ, կը լսեմ :

Հերմաս . — Աշակերտաց ամբարտաւանութիւնն տեսանք , տեսնենք
այժմ՝ նոցա աններողամութիւնն : Կռ
քա մի մարդ տեսան , որ դեւեր կը
հալածէր . Հաւանականաբար , յանուն
Ցիսուսի Քրիստոսի , հիւանդներ կը
բժշկէր : Աւետարանին չ'ասէր թէ
այս մարդն կը ջանար դեւեր հալածէր ,
այլ թէ կը հալածէր իրապէս : Ո՞վ չէր
ուրախանար , երբ տեսնէր , որ թշուառ
ներն իրենց ախտերէն կ'ազատէին : Աշա
կերտներն միայն՝ չեն ուրախանար այս
մասին : Արդեօք սցին բժշկութիւններն
վատ միջոցներով կը կատարուէին , կամ
զօրութեամբ խաւարի իշխանին կը գոր
ծուէին : Քանզի դեւն կամ չար ոգին
եւս երեքմն բարերար կը ձեւանայ ,
ըստ նիւթականին և աշխարհային բա
րեաց հրապոյրներով հոգիներն կը մու
լրեցնէ . քանզի չար ոգին ամեն ժա
մանակ գործած է այս տեսակ հրաշք
ներ և տակաւին կը գործէ և մեր մը
տածածէն աւելի կը գործէ : Բայց կը
տեսնենք , որ աշակերտներու պատմած

մարդասիրական գործն կամ հրաշքն
յանուն Ցիսուսի Քրիստոսի կը գոր
ծուի , և տարակոյս չը կայ որ սցին ան
ծանօթի ինքնակամ առաքելութիւնն
հաջոյ պիտի լինի Աստուծոյ :

Մեք նոյն խակ աշակերտաց բերանէն
կ'իմանանք այս մեծ խնդիրն , այսինքն
նոքա են , որք միամութեամբ կը
պատմեն իրենց վարդապէտին թէ՝ մի
մարդ տեսանք , որ քո անուամբ , քո
անունն կոչըն դեւեր կը հանէր : Հե
տեւապէս , սցին պարագան կը պար
տաւորէր աշակերտներն , որ ուրախա
նային , սքանչանային , որ մարդկանց
այսպիսի իշխանութիւնն և գորութիւն
տրուած է և այս գորութիւնն Ցիսուսի
անունն կոչըլու մէջ կը բովանդակի :
Բնդհակառակն՝ նոքա ոչ միայն չեն
ուրախանար , այլ և կ'ընդդիմանան , այլ
և կարգելուն սցին բժշկութիւններն
եւ ինչ պատրուակաւ . — տղայական
անտեղի պատճառաբաննութեամբ :
Աշակերտներն կ'արգելուն այն պատ
ճառաւ , որովհետեւ նոյն մարդն իրենց

Հետ չը հետեւիր Յիսուսին, կամ աւելի
լաւ ասել, իրենցմէն չէ : Նա կը գործէ
այն, ինչ որ աշակերտք միայն իրենց իւ-
րաւունք կը համարին գործել : Աւելի
յառաջ երթանք, աւելի խոր թափան-
ցենք և աւելի հետազոտենք աշակեր-
տաց մտածութիւնն : Գիտէք, թէ ին-
չո՞ւ համար կ'արգելուն . — վասն զի իւ-
րենք չեն կարող գործել, ինչ որ նոյն
մարդն կը գործէ : Չը տեսամք արգէն,
որ նոքա - Յիսուսին հետեւողներն - չը կա-
րացին լըրան ստորոտն գտնուած դի-
ւահարն բժշկելը Նոքա կը լիշեն իրենց
անկարողութիւնն եւ կուզեն բոլոր
մարդիկ նոյն անկարողութեան դատա-
պարտել :

Ոնեսիմ . — Բաւականին կծու կը
խօսիք եւ թերեւս այնպիսի բաներ
կ'ենթադրէք, որ ապացուցանել ան-
կարող էք : Պէտք է զգուշանալ, պէտք
է խնայելով յառաջ բերել այդպիսի
ենթադրութիւններ . այս մի ընդհա-
նուր կանոն է, որուն ենթակայ հա-
մարելու ենք նոյն խի առաքեալներն .

Չ գիտեմ թէ ինչու բացառութիւն
պիտի լինի նոցա համար : Ես իմ կող-
մէն չեմ արգարացներ առաքեալներն.
քանզի Յիսուսի Քրիստոսի պատաս-
խանն արդէն յանդիմանութիւնն կը
պարունակէ իւր մէջ Նկատողութեան
առնենք ուրեմն և մէք սոյն պատաս-
խանն, եթէ յարմար կը դատիք :

Հերման . — Ես կարող եմ շատ թո-
ղու ձեզ . քանզի առատ եմ : Սակայն
ինչ պիտի ասէք հետեւեալ իրողու-
թեան մասին : Աններող Սամարացիք,
բայց ոչ աւելի աններող քան աշա-
կերտներն , ընդունեցին զՅիսուս ,
չըհիւրբանկալեցին : Այս մի մեծ միաւ-
մունք է , մանաւանդ որ չեն ճանաւեր
զՅիսուս Քրիստոս : Այսու ամենայնիւ-
քարերու հարուածներով չեն արտաք-
սեր իրենց մէջէն և ոչ բանիւ կը վե-
րաւորեն : Մի զարմանաք , որ կը հա-
մառիմ ես սոյն կէտին վերայ : Պէտք
չէք , որ Սամարացիք անէին այս ամենն
և աւելի վատ , ոչ թէ արգարացնելու ,
որ անհնարին է , այլ աշակերտաց սոս-

կողի գրգիռն թեթեւցնելու ու ներելու համար : Ի՞նչ կ'անեն աշակերտներն : Նոքա կ'առաջարկեն Յիսուսին հուր իջեցնել երկնքէն Սամարացւոց վերայ և այրել : Յովեան , Հին Կտակարանի այս մարդն , աշակերտներէն աւելի խստասիրտ չէր առ Նինուէացիս : Յով . Դ . 1 :

Աշակերտներն կուզեն մի անընդմիջական հրաշալի և զարհուրելի պատիժ . նոքա կուզեն մի և նոյն հուրն , որ լափեց կործանեց զԱսոդոմ : Այս բաւական չէ , իբր թէ վրէժխնդրութիւնն իրենց կը պատկանի , (Եբ . Փ . 30 . Հոռոմ . ԺԲ . 19 .) այնպէս կը կարծեն , որ կարող են ինքնին երկնքի շանթերն երկրի վերայ իջեցնել : Մինչդեռ պահմի առաջ ըլ կարացին գթութեան հըրաշք գործել և դիւահարն բժշկել . այժմ այնպէս կը համարին , որ կարող են գործել հրաշք խստութեան . կ'երեւեի թէ բժշկելու զօրութիւն չունին , բայց սպանանելու և կործանելու զօրութիւն ունին : Սոյն դատապարտելի

յուսով մեծ մարդիկ կ'երեւին իրենց աչքին . մեծ արժանաւորութիւն կը թուի իրենց լինիլ գործի անողորմ արդարութեան : Եւ ամեն ժամանակիներ ու պարագաներ իրար հետ շփոթելով կը համարձակին Եղիսայի անունն արտասանել և իրենց անձն նմանեցնել սոյն մարդարէին , զոր պահ մի առաջ տեսին ՚ի փառս Թափորի ընդ Մոլիսիսի և ընդ Յիսուսի Քրիստոսի : Ի՞նչ կը մտածէք այսքան խստութեան , աններողութեան և ամբարտաւանութեան վերայ : Ի՞նչպէս կը տեսնէք , այլ եւս բան մի պակաս մեացած կայ :

Ոնեսիմ . — Աստուած մի արասցէ , եթէ ես պաշտպանեմ այդպիսի զգացումներ և այդպիսի պահանջումներ , ինչպէս է աշակերտացն : Բայց կ'աղաւեմ միայն , որ լաւ նկատողութեան առնուք Վարդապետի խօսքերն ու վարմունքն բոլոր պարագայից մէջ : Աւետարանին պարզապէս կ'ասէ միայն թէ Սաստեաց ՚ի նոսս : Եւ ի՞նչպէս , ի՞նչ խօսքերով : Ահա նորա բոլոր սաստն .

“Ոչ գիտէք, որց հոգւոյ էք դուք” :
 Արդեօք այն հոգւոյն վերայ կը խօսի,
 որով նոքա բորբռոււած էին : Արդեօք
 իւր Աւետարանի հոգւոյն վերայ կը
 խօսի : Քննութեան հարկ չը կայ այս
 մասին : Յայտնին միայն այս է, որ Յի-
 սուս իրը տգէտ կը համարի իւր աշա-
 կերտներն : Արդարեւ՝ նոքա տգէտ է-
 ին : Նոքա կ'անգիտանային ինչ որ մար-
 դըն յաճախ կը մոռնայ . նոքա կանգի-
 տանային՝ ինչ որ իրենցմէն յետոյ մար-
 դիկ տակաւին ըզգիտացին . նոքա կ'ան-
 գիտանային՝ ինչ որ իրենցմէն մին, թէ-
 և շատ ուշ, ուսոց մեղ թէ . “Բար-
 կութիւն մարդոյ զարդարութիւն Աւ-
 տուծոյ ոչ գործէ” : Աշակերտներն տաք
 կաւին չէին թափանցէր, չէին ըմբռներ
 նոր տնտեսութեան յատկութիւնն,
 նոր Օրինաց ոգին, որ է ոգի աղատ հը-
 նազանդութեան . քանզի, ըստ նոր
 տնտեսութեան, մարդն հաւատով
 կ'ընթանայ եւ ոչ տեսութեամբ :
 Արդ՝ անմիջական պատիմն տեսու-
 թեան և ոչ թէ հաւատոյ տնտեսու-

թեանն կը վերաբերէք : Յիսուս Քրիս-
 տոս կը յանդիմանէ աշակերտներն ի-
 րենց տգիտութեան համար, որ թէ-
 պէտ կամաւոր չէր, բայց անմեղ եւս
 չէր : Յիսուս աշակերտաց տգէտու-
 թիւնն յանդիմանելով՝ կը հաստատէ
 միանգամայն մի մեծ ճշմարտութիւն,
 այն է, որ նորա թագաւորութիւնն
 երկրիա վերայ՝ չէ թագաւորութիւն
 խստութեան նոյն խակ նոցա դէմ, որը
 զննեն չեն ընդունիր, այլ կը հակասակինն
 և կը դիմադրեն : Ի՞նչ կ'ասէ Յիսուս .
 “Որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան
 կորուսանել, այլ կեցուցանելու : Այս
 բացարձակ յայտարութիւնն մի վըճ-
 ռակին դատապարտութիւնն է ամեն
 աշխարհայինն խստութեան և աններո-
 զութեան, որ գործ կը գրուի յանուն
 Յիսուսի Քրիստոսի՝ իրը ՚ի շահ և ՚ի
 պաշտամանութիւնն նորա Վարդապե-
 տութեան : Յիսուս Քրիստոս ոչ մի
 պատիմ չը սահմաներ Սամարացւոց,
 ոչ աշակերտաց դառն նախանձախիլդ-
 րութեան երեւակայած պատիմն եւ

մը մի այլ թեթեւ պատիժ։ Ի՞նչ կ'ասէ
Յիսուս . Ի՞նչ քաղաք կամ տուն , որ
ձեր ողջոնն ընդունի , թօթափեցէք
ձեր ոտից փոշին վկայութեան համար։
Նոյն քաղաքն կամ տունն ինքնին կը
պատժուին . “Եթէ իցէ անդ որդի ող
ջունի (այօմիքն եթէ ընդունին զձեղ)՝
հանգիցէ ՚ի վերայ նորա ողջոնն ձեր .
ապա թէ ոչ ՚ի ձեղ դարձի ո . Ղուկ .
Փ . 6 . Եթէ աշակերտներն պատիժ
խնդրելով Սամարացւոց համար՝ ուր
խալմունք գործեցին , զոր ես ինքնին
կը ճանաչեմ և զոր չեմ ներեր երբէք ,
հաւատացէք սակայն , որ այս իրողութիւնն
այն առիթներէն մին է , որուն համար
պէտք է կրկնել Արքոյն Օգոստինոսի
մունք ո . քանզի մի կարեւոր և լրւսաւոր
գաս եղաւ այս Յիսուսի Քրիստոսի կողմէն . Ամեն բռնութիւն , աւ
մեն հակառակութիւն նա եւ ամեն
սպառնալիք , որ քրիստոնէութեան ու
դուռն պաշտպանելու պատրուակաւ
պիտի գործուէին , դատապարտուած

են նոյն օրէն ՚ի վեր , եւ Յիսուսի
Քրիստոսի Եկեղեցին կարող չէ հալած
ծել առանց անհնազանդ գտնուելու
իւր Փեսային . Ահա քեզ նորէն մի երակար
ընդհատութիւն . ներեցէք ինձ ,
կ'աղաջնեմ :

Հերման . — Դուք ընդհատեցիք իմ
խօսքս . քանզի ես վերջացուցած էի .
բայց խօսքը ձերն է : Կը յիշէք այժմ ,
ինչ որ խօստայաք ինձ :

Ոնեսլիմ . — Այս , կը յիշեմ : Ինչ որ
Աւետարանն մեզ կ'աւանդէ , ինչ որ
տասն և ութ գարերու և հազարաւոր
մղններու հետաւորութեամբ մեզ
ցոց կը տայ , ես ամենն իմ աչքովս
տեսայ և ամեն օր կը տեսնեմ : Հիմն
բոլորումին նման է , միայն թէ ձեւն
նոյն չէ :

Դուք ցուցիք ինձ աշակերտներն արգիւ
լուած , երբ իմացան նորա Որդւոյ մարդոց
քերանէն՝ թէ ի՞նչ կըսպասէ իրեն յերուասացէմ , և գուք իրաւամբ պնդեցիք
այս կէտին վերայ թէ . “Նոքա երկնչէին
հարցանելցնա վասն բանին այնորիկ” :

Այսօր ոչ ոք կը կարօտի Յիսուսի մարտնով յաջմարհ գալու անհաս տնօրենութեան պայմաններն նոր ՚ի նորոյ քըննել և ուսանիլ . քանզի երկար ժամանակ է , որ ամենայն ինչ կափարթալ է այս մասին : Բայց Բնչէ , որ կատարուած չէ . — չարչարանին Եկեղեցւոյ , որ է մարմին Քրիստոսի : Եկեղեցին և ո դարուց ՚ի գարս մատնեցաւ ՚ի ձեռս մարդկան : Քրիստոս գուշակած էր , և մէք կը տեսանեմք զայն : Բայց նա , որ կը ճանաչէ այս մարդարէութիւնն . նա , որ կը համաձայնի թէ՝ ծառայն իւր տիրոջմէն առաւել չէ , նա , որ գիտէ թէ չոր փայտն կարող չէ խուսափել այն կրակին՝ որ արդէն դալար փայտն այրեց . նա կը զարմանայ սակայն սոյն մարդարէութեան իւրաքանչիւր նոր կատարման ժամանակ , իբր թէ Քը ըիստոս կարող էր սխալիլ , իբր թէ Աւետարանն կարող էր աւետարան լինել դադրիլ . իբր թէ մարդն այլ և ս մարդ չէր : Կը զարմանայ նա ոչ միայն արիւնահեղ հալածանաց վերայ , ոչ

միայն անթիւ ու անհամար թշնամանաց ու գրկանաց վերայ , ոչ միայն Եկեղեցւոյ կրած վշտաց վերայ . այլ կը զարմանաց մանաւանդ այն հակառակութեանց և ընդդիմաբանութեանց վերայ , զորս կը կըէ ինքն իրբեւ քրիստոնեայ . . . :

Հերման . — Դուք ամեն բան կ'ասէք եւ գուշակելու բան չէք թողուր ինձ : Խօսքն կը փոխուի , գուք կընկըրտիք քրիստոնեայքն դատել : Դուք ինձ մէն բան չէք ծածկեք . մեր խօսակցութեան սկզբէն ես հասկցայ :

Ունարմ . — Անտարակցոյ , եւ ինձ պէտք չ'էր այնպէս ձեւանալ , իբր թէ կը կասկածիմ ձեք համկացողութեան վերայ : Թողքնեք այս անօգուտ պատճառակին ու կէղծիքն : Այո , քրիստոնէից է , որ կը տամ այն յանդիմանութիւնն , զոր գուք պահ մի առաջ առաքելոց տուիք : Կան քրիստոնեայք , որոնք կը զարմանան մինչեւ անգամ ամենաթեթև ձախորդութեանց վերայ , որուն կ'ենթարկուին իրբեւ քրիստո-

նեայ և կան նաեւ քրիստոնեայք , որք շատ բնական կը համարին , որ Քրիստոս չարչարուած է , մարտիրոսք չարչարուած են , ամբողջ հօտն կրած է տանջանքներ , գերութիւն , բանտ , աքսոր , և սակայն անկարող կը լնին Աւետարանի թշնամեաց կողմէն եղած մի ծուռ նայուածքի կամ մի արհամարհանաց ժպիտի համբերել : Ինչ որ իրենց կը պատահի , միշտ կը մեծացրնեն և կը ծանրացնեն : Ամեն անիբաւութիւն կը մեկնաւի . բայց իրենց պատահած անիբաւութիւնն անմեկնելի է : Ամենաթեթեւ վիշտն կամ փորձութիւնն անդամ , զոր իրենց Տերըն կը զրկէ , իրենց միոքն ու բանականութիւնն կը շփոմէ : Նոյա այնպէս կը թուի , որ արամաւորուած են ժառանգել խաղաղութիւն , ամենակատարեալ խաղաղութիւն , և արտօնաւորուած են այն Յիսուսէն , որ եկաւ սուր և հուր արկանել յերկիր եւ ոչ խաղաղութիւն : Ի՞նչ ժառանգներ . ի՞նչ յաջորդներ . ի՞նչ չարունակողներ

Քրիստոսի և քրիստոնէութեան . ի՞նչ ժառանգորդներ , որք առաջին աշակերտաց թերահաւատութիւնն միայն կը շարունակեն : Ի՞նչ կայ առաւել սովորական ճշմարտութեան վկայից մէջ (այս անունն է , զօր կարելի է տալ քրիստոնէից) . քան հարցնելու և խմանալու երկրողն , քան ճշմարտութիւնն ճանաչելու վախն , ինչպէս որ աշակերտք կ'երկնչելին հարցնել : Յիսուս Քրիստոսէն հարցնելու կարեւորութիւնն ամեն ժամանակ կը ներկայանայ , և Յիսուս Քրիստոս որ միշտ պատրաստ է թաղութ որ հարցնեն , պատրաստ է միշտ և պատասխանելու :

Եատ անդամ Յիսուսի պատասխանըն լսելու համար ուրիշ բան պէտք չէ , եթէ ոչ իրենց սրտի մէջ իջնել , իրենց սիրան քննել : Այսպէս կանեն քրիստոնեայք : Կը համարձակի՞ն այս պէս անել , քանի որ պէտք է անշուշտնորել , կարծիք մի մերժել կամ պարտք մի ճանաչել և կատարել : Կը համարձակի՞ն մինչեւ իրենց մտածու-

Թեան ծայրն դիմել, ուր եթէ դիմել
ին, պիտի Յիսուսի Քրիստոսի պատաս-
խանն գտնէին: Կը համաձայնին միշտ
հարցնելև քննել, կընդունի՞ն յօժարա-
կամ մի կարեւոր վիճաբանութիւն:
Քանի՞ քանի անդամ տեսնուածէ, որ
խոյս կը տան հանդիսող առիթէն, կը
խռովագին մի օգտակար քանախօսու-
թենէ, որով կարող էր իրենց միտքն
ըռսաւորիլ: Չե՞ն ասեր, որ կանոն դը-
րած են, հաշիւ տեսած են ձշմարտու-
թեան հետ, և ժամանակ որոշած են
իրենց կենաց մէջ, որ այսուհետեւ այլ
եւս ուսանելու բան չ'ունին, կամ լաւ
եւս ասել բան մի պիտի չ'ուսանին:
Այե՛րթ երկարութեամբ, մե՛րթ թու-
յութեամբ, մե՛րթ ծուլութեամբ, մե՛րթ
գութաղրութեամբ, նորա միշտ կըզդու-
շանան հարցնել Յիսուս Քրիստոսին և
որչափ կարելի է հեռի կը կենան նորա
ծային լըելն և հասկնալէն: Այս ե-
ղանակաւ ահա, նորա կ'իմանան մի-
այն, ինչ որ իմանալ կ'ուզեն կամ ինչ
որ ակամայ իմացան, չը կարենալով

դիմագրել: Ի՞նչ կը կարծէք չը կան
այսպիսի մարդկի քրիստոնէից մէջ: Ոչ
մին չը ճանաչեր անձամբ:

Ներմաս. — (Հառաջելով): Թերեւս
մին կը ճանաչեմ:

Ոնեաթմ. — Հաւանաբար՝ ամեն քր-
իստոնէի մէջ մի հատ կայ: Բայց պի-
տի տեսնե՞նք քրիստոնէայք, որ վիճեն
իրարու հետ Առ ո՞վ պիտի մէծ լինի: Բայտ ե-
րեւութին չը կայ այսպիսի քրիստոնէայ,
որ ՚ի տես մարդկան, եւ աշակերտաց
նման առաջի Յիսուսի, կամ լինքն իւր
յատուկ անուամբ մեծութեան համար
վիճէ: Բայց այս ամեն զգուշութեանց
մէջ ի՞նչ կը կօրուսանէ չարն: Խիստ
ասկաւ բան: Թողի մարդ բարձրացնէ
զինքն համարձակ, կամ թող յամա-
ռութեամբ և վեսութեամբ պաշտպա-
նէ իւր զգացումն՝ իւրեւ միակ բարի,
իւրդրութիւնն՝ իւրեւ միակ կատարեալ
իւր աղանդն՝ իւրեւ ամենէն լաւն,
վերջապէս իւր մարդն՝ իւրեւ ամենէն
մէծ, ի՞նչ կը լինի այս տեղէն: Այս կը
նշանակէ կեղծել, պատրուակել և աւե-

լի վատ պատրուակել մարդկանց առջև
իւր սեպհական օգուաներու համար
ունեցած գաղափարն և իւր փափաքն՝
տեսնելզը իրմէն վար, տեսնելիւր ոտ-
քերու տակ, որ ամբարտաւանութեան
ամենաքաղցր հաճոյքներէն և բաւա-
կանութիւններէն մին է, թէեւ ամ-
բարտաւանութիւնն ոչ կը բաւակա-
նանայ և ոչ կը յագի երբէք: Այսպատ-
մած օրինակս կարծեմ թէ բաւական
է: Դուք չէք կարող ասել ուրեմն թէ՝
այսպիսի դէպքեր սակաւ են և կամ
թէ աշակերտաց ունայնասիրութիւնն
կամ հաղարտութիւնն իսկապէս կը տար-
բերի ուրիշներէն: Առաջինն միշտ չա-
փաղանց և համարձակ կը թուի, ահա
սյս է պատճառն, որ աշակերտաց ա-
րածին վերայ կը զարմանաք: Աշակերտք
կը պարծին, կը վիճեն իրարու հետ մի
յատուկ և անձնական մեծութեան վե-
րայ: Մէնք աւելի մեծն կ'անենք, եթէ
կարողանանք: Քանզի մենք եւս մեր
ձեռքէն եկածն համարձակ կ'անենք.
միշտ զմեղ կը մեծցնենք, բայց այս

այն մեծութիւնն չէ, որով մեր Տէ-
րըն մեծացաւ, մենք միշտ մի ուրիշ
զգեստ կը հագնենք, մի ուրիշ զարդով
կը զարդարուինք, որ խոնարհութիւ-
նըն չէ և կը ջանանք բարձրացնել ըղ-
մեղ նորա առջեւ, որ զմեղ իւր Հօր
հետ հաշուեցնելու համար՝ խոնարհե-
ցաւ և իւր անձն ունայնացց: Որչափ
վատթարագոյն համարենք, ինչ որ ա-
րին աշակերտաներն ՚ի ստորոտս Յափո-
րի, այնու ամենայնիւ, այս եւս պիտի
չը մոռնանք, որ նոյա շնորհիւ մի դաս,
մի զգուշութեան օրինակ ունեցանք
մենք, զոր նոքա չ'ունեին, Այն մա-
նուկն, զոր Յիսուս ներկայացց նոյա,
և որով անշուշտ կամեցաւ նա որ ինք-
նին քննեն իրենց անձն, այն մանուկն
մի յաւիտենական յանդիմանութիւնն
է մեր մեծամոռութեան: Մէնք աւելի
լաւ գիտենք (աշակերտք կարող չէին
այն ժամանակ իմանալ) թէ ինչ ար-
ժեք ունի և ինչքան էական և առըն-
չակից է Քրիստոնէութեան՝ խոնար-
հութիւնն, սոյն նոր առաքինութիւնն,

որոյ օրինակն պէտք էր որ տար մեղ
Աստուած, որպէս զի և մեք գոնէ նու-
րա գաղափարն ունենայինք : Մենք ա-
ռաքեալներէն տւելի լսաւ կը մտածենք,
բայց առաքեալներէն առելի վատ կը
գործենք : Ի՞նչպէս կը թուի քեզ մեր
յառաջադիմութիւնն :

Հերմաս .— Զգուշացէք, բարեկամ,
այնպէս կը թուի թէ կը զայրանաք :
Գոհ պիտի լինէիք արդեօք, եթէ բու-
լորովին իրաւացի լինէիք : Կարելի՞ է
արդեօք, որ խսպառ իրաւացի լինէիք :
Ոչ ապաքէն այն ժամանակ խոնարհու-
թիւնն մի լոկ բառ կը լինէր Յիսուս
Քրիստոսէն մեր բառարաններու մէջ
աւելցած : Միթէ բնաւ խոնարհներ
կամ հեղեր չը կա՞ն աշխարհի մէջ : Եւ
թէ այդպէս է, կը նշանակէ, որ բնաւ
Քրիստոնեայք չը կան . և ի՞նչ է Քրիս-
տոնէութիւնն առանց Քրիստոնէից :

Ոնեսիմ .— Զի՞ որ ասացի, ձեզ յան-
դիմանելու ժամանակ, որ շուտով փո-
խարէնն պիտի հատուցանէք : Այս,
իրաւամբ կը յանդիմանէք զիս : Իմ

խօսքերս, իմ ասածներս շոտ բայցար-
ձակ են : Ի՞նչ որ տեսայ, տարակոյս
չը կայ, որ լաւ տեսայ եւ ահա նոյն
հաւատարմաբար յառաջ կը բերեմ :
Բայց ես վատ կը խօսիմ, երբ այնպիսի
եղանակաւ կը խօսիմ, որ կ'ու զեմ հաս-
կացնել թէ նախապատռութեան կամ
առաջնութեան վէճն բոլոր քրիս-
տոնէից գործ է առ հասարակ, և թէ
հաւատն տակաւին չէ խորտակած նո-
յա ամերատաւանութեան եղիսւրն :
Աչքիս առ ջեւ յանցանք մի կը տեսնեմ,
որ թէ եւ հազուադէպ չէ, բայց և ու
հանքական է . և նոյն յանցանքով զա-
ռածուած քրիստոնեայքն, եթէ քրիս-
տոնէայ են, շուտով կըզգան անշուշտ
իրենց յանցանքն և սաստիկ կը կշտամ-
քեն իրենց անձն : Սովոր կը տարբե-
րին նոքա ուրիշ մարդիկներէն . բայց
ի՞ հարկ է մի միայն սոված չէ որ կը
տարբերին : Ես պիտի զգուշանամ ա-
պերախտութենէ, ես չեմ ուրանար,
այլ կը ճանաչեմ այն յաղթութիւնն,
զոր ամեն օր կը կատարէ Յիսուս Հոգ-

շոյլ Արքով ջերմեռանդն քրիստոնէից
հոգւոյն մէջ։ Աչ ամենուն և ոչ յատ-
կապէս որ և իցէ միոյն կը վերաբերին
մեր կարդացած պատմութեան հետե-
ւեալ խօսքերն, զոր պիտի բացատրեմ։
Մերժել, դեւեր հանելէ և հալածելէ
արդելու այն մարդիկն, որոնք մեզ հետ
չեն հետեւիր Յիսուս Քրիստոսին, այ-
սինքն ընդհանրական Եկեղեցւոյ հա-
զորդակցութենէն կորել, նաև քաղաք
քաղաքան ընկերութենէն տարամերժել,
նզովել և պատժել այն մարդիկն, որոնք
քրիստոնեայ են, բայց մեզ նման քրիս-
տոնեայ չեն, որոնք իրենց ձեւով և ոչ
թէ մեր ձեւով աշխարհիս վերայ Յի-
սուսի Քրիստոսի գործն կը գործեն,
այս հալածանքով գրեթէ ամեն քրիս-
տոնեայք կը հալածեն, մանաւանդ մեր
ժամանակի քրիստոնեայք, որ մի յա-
տուկ կերպիւ կը հալածեն, կը հալածեն
և կը պարծին, կը հալածեն և պատիւ կը
համարին. կը ցաւին, երբ անկարող կը
լինին հալածել. կը կրկնեն, որչափ կա-
րող են, ոչ միայն յանդգնաբար իրենց

անձն նախապատիւ կը համարին այն
քրիստոնեայներէն, որք իրենց նման կը
խոստովանին զՅիսուս Քրիստոս մար-
մնով եկեալ յաշխարհ. այլ և կը դա-
տապարտեն, կը մերժեն. կըսպառեն
իրենց բոլոր ոյժն ու զօրութիւնն, որ
յաղթեն, անուանարկեն և կործանեն ։
Եւ որ ամենէն զարմանալի է, Յիսու-
սի Քրիստոսի թշնամիներն աւելի սիւ-
րով կընդգունին, նոցա հետ աւելի սիւ-
րով կը վարուին, բան թէ Յիսուսի
բարեկամաց հետ, որոնք դժբաղդա-
բար, եթէ յանդգնութիւն ըլ համա-
րուի ասել, նոյնպէս չեն հնչեր այն
Սուրբ Անունն, ինչպէս իրենք կը հնչեն,
և կամ թէ տարբեր կերպիւ կը գրեն։
Այս, այս, ամենայն անաշառութեամբ
կ'ասեմ, որ շատ անդամ հալածողաց
եւ հալածելոց մէջ եղած տարբերու-
թիւնն ուրիշ բան չէ, եթէ ոչ երկու
մատենագրի մէջ եղած ուղղագրական
տարբերութեան նման մի բան . եւ
շատ ժամանակ այնպէս պատահած է,
և սակաւ մնացած է, որ Եբրայական
կ

ԵՒՔՔՈԼԵԼԻՆ (1) պատմութիւնն նորոգուի
Եկեղեցւոյ մէջ ՚ի նախատինս քրիստո-
նէից :

Հերմաս .— Այս ժամանակներն ան-
ցած են , և այսօր Եկեղեցւոյ մէջ տի-
բապետով ոգին հակառակ է նոյն ժա-
մանակի ոգւցն :

Ոնեսիմ .— Այս կարծէք թէ ես չը-
դիտեմ նոյն ժամանակի տարբերու-
թիւնն և այն շնորհըն , որով Աստուած
արտօնաւորած է մեր ժամանակն : Աս-
կայն դառնութեան արմատն տակա-
ւին խլուած չէ . նա սոսկալի ոստեր
կ'արձակէ հաւատացելոց հոգւց մէջ :

(1) ԵՒՔՔՈԼԵԼԻՆ երբայական բառ է , որ հասկ կը
նշանակէ : Գատաւորաց մէջ կը կարդանք , (ԺԲ. 6)
որ երբ Գաղանագացիք Եփրեմի հետ կը կռուէին ,
և յաղթելով Յօրդանանու կիրճն գրաւած էին ,
պատերազմէն աղաստուած Եփրեմեանք եկին այն տե-
ղին անցնելու . և թէ եւ ուրացան որ Եփրեմեան
չեն , սակայն Գաղանագացիք քը թազին կիրճն անց-
նել , և սրովիւտեւ երկու կողման հնալուներն կը
տարբերէին՝ տափեցին որ ԵՒՔՔՈԼԵԼԻՆ հնչեն , Եփ-
րեմեանք չը կարացին և ԱՒՔՔՈԼԵԼԻՆ հնչեցին , ուստի
և կոտրուեցան Գաղանագացիներէն :

Եւ մեք կարող չենք տակաւին իւր պար-
զութեամբ ընդունիլ և ՚ի խորոց պատէ
կրկնել Աստուածոյն այս օրհնութեան
խօսքն . « Ննորհք ընդ ամենեսին , ոք
սիրեն զՏէր մեք Յիսուս Քրիստոս ա-
նեղծութեամբ » . Եթե . Զ . 24 :

Իսկ ինչ որ կը վերաբերի այն առա-
ջարկութեանն , զօր աշակերտք ամե-
նայն ամներողութեամբ , (գու ասա
մղեռանդութեամբ) համարձակեցան
առաջարկելիրենց աստուածային Վար-
դապետին՝ մի այլ մղեռանդութիւն
(Ասմարացւոց) պատմելու համար , որ
աւելի ներելի էր քան իրենցն , այս մա-
սին կը խոստովանիմ , որ նմանօրինակ
բան դտած չեմ բնաւ ոչ մի քրիստո-
նէի բերանի կամ գրուածքի մէջ , քան-
զի անհնարին է զայս առնել և քրիս-
տոնեայ համարուիլ : Օրհնեալ է Աստ-
ուած , մենք լաւ գիտենք՝ թէ Որոյ ո-
գուց Ենք , և ոչ մին մեզմէն կը պարձի
տեամել շանթ եւ կայծակ ՚ի գլուխա
թշնամեաց Աստուածոյ : Թէ և սոյն տար-
բերութիւնն հին և նոր ժամանակնե-

բուն և պարագաներուն կը պատկանի,
բայց կան վայրիեաններ, որ մեք եւս
տիսուր ախոյեաններ կը լինինք նոյա,
զորս կը գատասղարտենք :


Ներեցէք, որ խօսքս ձեզ ուղղեմ:
Դուք քաղցր բնաւորութիւն և բա-
րեխառն բարք ունիք : Բայց եթէ եր-
բէք տեսնէիք անփառութեան և չա-
րութեան յաղթանակներն եւ երկար
յաղթանակներն, խորհեցէք՝ թէ ի՞նչ
կը զգայիք : Առաքելական պատուերն,
որ կը հրամայէ քրիստոնէից ընդ սրով
և ընդ խաչիւ՝ բառնալ շոտրվ յիշոս ՚ի
մշտ առանց բարիութեան և երիմութեան .
(Ա. Տիմ. Բ. 8.) պէտք է որ միշտ ձեր
յիշողութեան մէջ լինէր և խմացնէր
ձեզ, որ աղօմէիք այս յանցաւոր երջա-
նիկներու համար : Կը կատարէիք ար-
դեօք այս պատուէրն . կը կատարէիք
արդեօք ՚ի սրուէ : Կը խորհեիք արդեօք
եւ ձեզ համար տիրող մասնութիւն
կը շնէիք սոյն ճշմարտութիւնն, որ
նոքա Աստուծոյ արդար տնտեսու-
թեան ողբալի գործիքներն են, որով

թէ և զձեղ կը պատմէ, բայց իրենց
բարեբաղդութեան հարուածով զի-
րենք եւս կը պատմէ : Ի՞նչ զգացում
ներ կը մնուցանէիք : Ի՞նչ բաղձանք-
ներ և բարեմազթութիւններ կը յղա-
նայիք : Ինչով կը վկտանայիք, ինչով
կուրախանայիք : Ի՞նչ կը լինէր նիւթն,
ի՞նչ կը լինէր ներշնչութիւնն, վերջա-
պէս ի՞նչ կը լինէր համն և աղն ձեր
խօսակցութեանց : Հաղար անդամ չէիք
ցանկանար, ինչ որ չէիք կարող պա-
հանջել. եթէ առաքելոց հաւասար գի-
տութիւն ունենայիք եւ նոյն ժամա-
նակին մէջ ապրէիք, ոչ ապաքէն ինչ
որ ցանկայիք, ինչ որ ձեր մօքէն անց-
նէր նոյնն պիտի խնդրէիք, ինչպէս նո-
քա ցանկացան եւ խնդրեցին Սամա-
րացիք կործանել : Ու պատասխանե-
ցէք, եթէ կարող էք, շատ կ'ուրա-
խանամ. թող միայն ես մնամ ամբաս-
տանելոց աթոռակին վերայ . քանզի
մաքով ես նստայ նոյն աթոռակին վե-
րայ և այնպէս շարունակեցի ձեզ հետ
խօսակցութիւնս : Ախալցայ դձեզ նոյն

աթոռին վերայ նստեցնելու համար .
բայց միթէ միայն եմ ես . միթէ ըլկան
ուրիշներ նոյն աթոռակին վերայ : Նա
խանձն , ոմն , բարկութիւնն , ատե-
լութիւնն , որ մարդասպանութիւն է ,
միթէ այդքան հաղուադէպ էն : Մի-
թէ Մարդասիրութիւնն այդքան հան-
րացած է : Միթէ մարմինն իսպառ
յաղթուածն է : Երանիթէ . բայց ես
հաւատացած չեմ այդ բանին , և տա-
կաւին չեմ հաւատար . ինձ կը թուի ,
որ դեռ այն վայրիեանն եկած հասած
չէ , որ քրիստոնէլոց մէջ այլ ես հարկ
ըլլինի յորդոր կարդալ ողջրմածու-
թեան , բարերարութեան և միջնոր-
դութեան պարտուց վերայ : Ես կը
կարծեմ , ես կը զգամ , որ դառնու-
թիւնն միշտ պատրաստ է զեղանիլ ՚ի
սիրտ մարդոյ : Այն դառնութեան հո-
սանքն կը վազէ այն հեղեղատէն , զոր
կը փորէ ցասումն և սրտմութիւնն :
Պէտք է երկար ժամանակ Յիսուսի
Քրիստոսի դպրոցին եւ ընկերակցու-
թեան մէջ դժնուիլ . պէտք է շատ

բան ուսանել Յիսուսէն , որ մարդ կա-
րողանայ շատ բան առ ոտն կոխել :
Պէտք է , նորա մօտ նստած , խիստ
բարձրէն տեսնել այս կենաց շահերն
ու յուլզումներն , որպէս զի մարդ ըլ-
մոլորի , ըլ պատրի , այլ ատէ ցասումն
ու սրտմութիւնն : Փանք Աստուծոյ ,
մէք գիտենք՝ թէ որց հոգւց ենք և
թէ որով հոգւով պարտինք լինիլ :
Մենք գիտենք , որ իբրեւ քրիստոնեայ ,
բնաւ երբէք պէտք չէ որ ատենք :
Աշխատինք ուրեմն աւելի լաւ խմանալ
այս պարտաւորութիւնն . յաճախ մտա-
ծենք սորա վերայ , զգուշանանք եւ
զգուշայնենք զիրեար . խրամ կար-
գանք միմեանց , և խնդրենք Աստուծ-
ոյ , որ միայն կարողն է տալ . “Զգութ ,
զողորմութիւնն , զքավըրութիւնն , ըղ-
խոնարհութիւնն , զհեղութիւնն , զեր-
կայնմտութիւնն .” Կողու . Գ . 12 :

100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200
201
202
203
204
205
206
207
208
209
210
211
212
213
214
215
216
217
218
219
220
221
222
223
224
225
226
227
228
229
230
231
232
233
234
235
236
237
238
239
240
241
242
243
244
245
246
247
248
249
250
251
252
253
254
255
256
257
258
259
260
261
262
263
264
265
266
267
268
269
270
271
272
273
274
275
276
277
278
279
280
281
282
283
284
285
286
287
288
289
290
291
292
293
294
295
296
297
298
299
300
301
302
303
304
305
306
307
308
309
310
311
312
313
314
315
316
317
318
319
320
321
322
323
324
325
326
327
328
329
330
331
332
333
334
335
336
337
338
339
340
341
342
343
344
345
346
347
348
349
350
351
352
353
354
355
356
357
358
359
360
361
362
363
364
365
366
367
368
369
370
371
372
373
374
375
376
377
378
379
380
381
382
383
384
385
386
387
388
389
390
391
392
393
394
395
396
397
398
399
400
401
402
403
404
405
406
407
408
409
410
411
412
413
414
415
416
417
418
419
420
421
422
423
424
425
426
427
428
429
430
431
432
433
434
435
436
437
438
439
440
441
442
443
444
445
446
447
448
449
450
451
452
453
454
455
456
457
458
459
460
461
462
463
464
465
466
467
468
469
470
471
472
473
474
475
476
477
478
479
480
481
482
483
484
485
486
487
488
489
490
491
492
493
494
495
496
497
498
499
500
501
502
503
504
505
506
507
508
509
510
511
512
513
514
515
516
517
518
519
520
521
522
523
524
525
526
527
528
529
530
531
532
533
534
535
536
537
538
539
540
541
542
543
544
545
546
547
548
549
550
551
552
553
554
555
556
557
558
559
559
560
561
562
563
564
565
566
567
568
569
569
570
571
572
573
574
575
576
577
578
579
579
580
581
582
583
584
585
586
587
588
589
589
590
591
592
593
594
595
596
597
598
599
599
600
601
602
603
604
605
606
607
608
609
609
610
611
612
613
614
615
616
617
618
619
619
620
621
622
623
624
625
626
627
628
629
629
630
631
632
633
634
635
636
637
638
639
639
640
641
642
643
644
645
646
647
648
649
649
650
651
652
653
654
655
656
657
658
659
659
660
661
662
663
664
665
666
667
668
669
669
670
671
672
673
674
675
676
677
678
679
679
680
681
682
683
684
685
686
687
688
689
689
690
691
692
693
694
695
696
697
698
699
699
700
701
702
703
704
705
706
707
708
709
709
710
711
712
713
714
715
716
717
718
719
719
720
721
722
723
724
725
726
727
728
729
729
730
731
732
733
734
735
736
737
738
739
739
740
741
742
743
744
745
746
747
748
749
749
750
751
752
753
754
755
756
757
758
759
759
760
761
762
763
764
765
766
767
768
769
769
770
771
772
773
774
775
776
777
778
779
779
780
781
782
783
784
785
786
787
788
789
789
790
791
792
793
794
795
796
797
798
799
799
800
801
802
803
804
805
806
807
808
809
809
810
811
812
813
814
815
816
817
818
819
819
820
821
822
823
824
825
826
827
828
829
829
830
831
832
833
834
835
836
837
838
839
839
840
841
842
843
844
845
846
847
848
849
849
850
851
852
853
854
855
856
857
858
859
859
860
861
862
863
864
865
866
867
868
869
869
870
871
872
873
874
875
876
877
878
879
879
880
881
882
883
884
885
886
887
888
889
889
890
891
892
893
894
895
896
897
898
899
899
900
901
902
903
904
905
906
907
908
909
909
910
911
912
913
914
915
916
917
918
919
919
920
921
922
923
924
925
926
927
928
929
929
930
931
932
933
934
935
936
937
938
939
939
940
941
942
943
944
945
946
947
948
949
949
950
951
952
953
954
955
956
957
958
959
959
960
961
962
963
964
965
966
967
968
969
969
970
971
972
973
974
975
976
977
978
979
979
980
981
982
983
984
985
986
987
988
989
989
990
991
992
993
994
995
996
997
998
999
999
1000



1808

ՀՀ Ազգային գրադարան



NL0331425

ՀՀ Ազգային գրադարան



NL0331423

ՀՀ Ազգային գրադարան



NL0331428

ՀՀ Ազգային գրադարան



NL0331427

ՀՀ Ազգային գրադարան



NL0331426

ՀՀ Ազգային գրադարան



NL0331422

ՀՀ Ազգային գրադարան



NL0331421

ՀՀ Ազգային գրադարան



NL0331420

